

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

2011թ. մարտի 5 – ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.«Բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների համագործակցության սկզբունքների մասին» երևանյան հոչակագրի հաստատում:

/ զեկ՝ Ռ.Խ.Հակոբյան /

2.ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի քննարկում:

/ զեկ՝ Ռ.Խ.Հակոբյան /

3.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2010-2011 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների ներկայացում:

/ զեկ՝ Վ.Լ.Կատվայան /

4.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2010-2011 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների ներկայացում:

/ զեկ՝ Ս.Պ.Ավագյան /

5.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց և օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Նա գիտխորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց բարձրագույն կրթության ոլորտի առանձնահատկությունների, մասնավոր-

րապես համալսարանների համագործակցության անհրաժեշտության վրա: Այդ ուղղությամբ մշակվել են սկզբունքներ, որոնք հռչակագրի տեսքով ներկայացվել են համալսարաններին: «Բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների համագործակցության սկզբունքների մասին» երևանյան հռչակագիրը ստորագրել են Կիևի, Իրկուտսկի, Թբիլիսիի, Շանհայի, Մինսկի, Մոսկվայի լեզվաբանական, Պյատիգորսկի և այլ երկրների հայտնի համալսարաններ: Գավառի պետական համալսարանը ևս իր ստորագրությունն է դրել այդ հռչակագրի տակ: Զեկուցողն առաջարկեց հաստատել «Բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների համագործակցության սկզբունքների մասին» հռչակագիրը:

Անցնելով օրակարգի հաջորդ հարցին՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը ներկայացրեց ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը՝ նշելով, որ այն քննարկման է դրվելու համալսարանի բոլոր ստորաբաժանումներում: Բանն այն, որ հակակոռուպցիոն շարժումը համապետական բնույթ է կրում, և մշակված ռազմավարական ծրագրի 10 կետերից 6-րդը վերաբերում է բուհերին, որոնք էլ իրենց հերթին պետք է մշակեն սեփական ռազմավարական ծրագիրը: Տիկին Հակոբյանը կարևորեց այն հանգամանքը, որ համալսարանում նման ծրագիր մշակելու համար ստեղծվել են համապատասխան փաստաթղթային հիմքերը: Այս առումով մասնավորապես կարևորվեց «ԳՊՀ Ակադեմիական ազնվության հայեցակարգի» ընդունումը: Կարելի է արձանագրել, որ համալսարանում բոլոր պայմանները կան կոռուպցիոն ռիսկերը բացառելու համար: Ծրագիրը բաղկացած է 30 կետից, բայց դա նախագիծ է, որ պետք է ուսումնասիրվի, քննարկվի, ըստ անհրաժեշտության արվեն դիտողություններ, ներկայացվեն առաջարկություններ:

ԳՊՀ բանասիրական և բնագիտական ֆակուլտետների 2010-2011 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքները ներկայացրին դեկաններ Վ.Կատվայանը և

Մ.Ավագյանը: Ջեկուցողները հանգամանորեն անդրադարձան կատարված աշխատանքներին, խոսեցին ըստ կուրսերի ուսանողների առաջադիմության, կազմակերպված միջոցառումների, թերությունները վերացնելու համար ձեռնարկված միջոցների և հարակից այլ հարցերի մասին:

Այնուհետև հաղորդումով հանդես եկավ տիկին Հակոբյանը: Նա ասաց, որ համալսարանում հյուրընկալվել է ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կայազորի պետը, որը առաջարկել է համագործակցության հուշագիր կնքել դասընթացների համատեղ կազմակերպման, հանդիպումների, ծրագրերի միասնական իրականացման համար:

Ընթացիկ հարցերը վերաբերում էին ԳՊՀ դասախոսների հետազոտական աշխատանքների ակտիվացմանը, ներկայացվող գիտական զեկուցումներին, մասնագիտությունների ցանկի նորացմանը, մագիստրոսական թեմաների ներկայացմանն ու հաստատմանը, մագիստրոսների անհատական ծրագրերին: Դրանք ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուբյանը: Նա ասաց, որ գիտխորհրդին են դիմել գիտությունների թեկնածուներ Կարինե Ավետիսյանը, Հովիկ Փանոսյանը և Թաթուլ Ասոյանը՝ դոցենտի գիտական կոչում ստանալու համար, ապա ավելացրեց, որ նրանց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է դոցենտի գիտական կոչումն ստանալու պահանջներին:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ նախագահ՝ Հ. Ղաջոյան, անդամներ՝ Ա. Ապրոյան, Ա. Շուքուրյան: Անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն միասնական քվեաթերթիկով:

Արդյունքներն ամփոփեց Հ.Ղաջոյանը: Նա ասաց, որ երեք հայցորդների դեպքում էլ գրանցվել են նույն արդյունքները՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Այնուհետև քննարկվեց իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր Հիանուշ Հրանտի Հակոբյանի «Պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում» ուսում-

նական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը: Ելույթ ունեցան Ռ.Հակոբյանը, Հ.Ղաջոյանը, Ա.Ապրոյանը: Առաջարկվեց ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Որոշեցին՝

1.Հաստատել «Բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների համագործակցության սկզբունքների մասին» երևանյան հոչակագիրը:

2.ԳՊՀ ստորաբաժանումներում քննարկել ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը և ներկայացնել առաջարկներ:

3.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Վ.Կատվայանի ղեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի ղեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

5.Հավանություն տալ ԳՊՀ-ի և զինվորական կայագրի միջև փոխհամագործակցության առաջարկին:

6.Ելնելով քվեարկության արդյունքներից՝ քիմիական գիտությունների թեկնածու Կարինե Ավետիսյանին, կենսաբանական գիտությունների թեկնածու Հովիկ Փանոսյանին, բանասիրական գիտությունների թեկնածու Թաթուլ Ասոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և ներկայացնել ԲՈՀ՝ հաստատման:

7.Տպագրության երաշխավորել Հրանուշ Հակոբյանի « Պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում» ուսումնական ձեռնարկը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2**

2011 թ. ապրիլի 13-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին խորհրդի 35 անդամներից 29-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի քննարկում և հաստատում:

/ զեկ՝ Ռ.Խ.Հակոբյան /

2.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքների ներկայացում:

/ զեկ՝ Հ.Գ.Ղաջոյան /

3.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքների ներկայացում:

/ գեկ՝ . Ս.Գ.Ամիրխանյան /

#### 4.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց և օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Զեկուցման սկզբում նա տեղեկացրեց, որ ապրիլի 6-ին Երևանում ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԵԱՀԿ Երևանյան

գրասենյակի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի» նախաձեռնությամբ կազմակերպվել էր համաժողով, որին մասնակցում էին տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հրավեր էր ստացել նաև Գավառի պետական համալսարանը: Տիկին Հակոբյանը նշեց, որ համաժողովի նախաձեռնողները բարձր գնահատական են տվել Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական գործունեությանը:

Այնուհետև ներկայացվեցին ծրագրի հիմնական դրույթները, նշվեցին արված առաջարկությունները և դիտողությունները, ԳՊՀ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնելու անհրաժեշտությունը:

Օրակարգի հաջորդ երկու հարցերի վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանը և տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Նրանք հանգամանորեն ներկայացրին ֆակուլտետներում կատարված ածխատանքները 1-ին կիսամյակի ընթացքում: Նշեցին և ձեռքբերումները, և բացթողումները:

Նիստում քննարկվեց իրավաբանական գիտությունների թեկնածու Սամվել Խաչատրյանի «Հայկական գրադաշտական իրավունքը» և «Աշխարհի իրավական համակարգերը /մեթոդական ուղեցույց /» աշխատանքները տպագրության երաշխավորելու հարցը: Ելույթ ունեցան Ռ.Հակոբյանը, Հ. Հարությունյանը, Ա.Ապրոյանը, Հ.Ղաջոյանը:

Որոշեցին՝

1. Հավանություն տալ ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրին և ներկայացնել ԳՊՀ կառավարման խորհրդի հաստատմանը:

2. Հ. Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3. Ս. Ամիրխանյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Տպագրության երաշխավորել Սամվել Խաչատրյանի «Հայկական զրադաշտական իրավունքը» աշխատությունը և «Աշխարհի իրավական համակարգերը» մեթոդական ուղեցույցը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

### **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3**

2011 թ. մայիսի 7 – ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին գիտխորհրդի 35 անդամներից մասնակցում էին 26 –ը:

Օրակարգ՝

1. ԳՊՀ 2011-2016 թվականների զարգացման և բարեփոխման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ Ռ.Խ.Հակոբյան /

2.ԳՊՀ-ում կրթական ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտության մասին:

/ զեկ՝ Ա.Հ.Ապրոյան /

3.Ընթացիկ հարցեր:

Բացելով նիստը՝ ԳՊՀ ռեկտոր տիկին Ռ.Հակոբյանը գիտխորհրդի անդամներին նախ շնորհավորեց համալսարանի հիմնադրման 18-ամյակի կապակցությամբ, ապա շնորհակալական խոսք ասաց նախորդ 5 տարիների արդյունավետ աշխատանքի համար: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ԳՊՀ 2011-2016 թվականների զարգացման և բարեփոխման հայեցակարգը, որը ներառել է հետևյալ ուղղությունները.

1.Հիմնադրույթներ

2.ԳՊՀ զարգացման և բարեփոխման հայեցակարգի հիմնադրույթներ

3.ԳՊՀ զարգացման և բարեփոխման ուղղությունները

4.ԳՊՀ գործունեության հիմնական սկզբունքները

5.Ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտահետազոտական ոլորտների զարգացման ու բարեփոխման հիմնադրույթներ

6.Կրթական միջավայրի արդիականացմանն ուղղված միջոցառումներ

7.Ուսումնադաստիարակչական ոլորտի զարգացման ու բարեփոխման հիմնադրույթներ

8.Վարչարարության, ֆինգործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպման ոլորտների զարգացման և բարեփոխման հիմնադրույթները

9.Հայեցակարգի հիմնադրույթները արտաքին կապերի և համագործակցային ծրագրերի ընդլայնման ոլորտում;

Հայեցակարգի մասն է կազմում ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը:

ԳՊՀ-ում կրթական ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտության մասին էր տնտեսական գծով պրոռեկտոր Ա.Հ.Ապրոյանի զեկուցումը: Նա մասնավորապես առաջ քաշեց համալսարանում պատճենահանման և գրենական պիտույքների վաճառքի կետ բացելու հարցը:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյանը իր խոսքում նշեց, որ 2011թ. ԳՊՀ շրջանավարտների թիվը կազմել է 635: Նա գիտխորհրդի անդամներին հորդորեց առավել ուշադիր լինել գնահատականների հարցում, գնահատել ըստ իրական արդյունքների: Ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպման գրավականներից է սովորողների փաստաթղթերի կանոնավորումը: Միաժամանակ կարևոր է ուսանողների հետ կապի պահպանումը նաև ուսումնառությունից հետո:

Այնուհետև Ն.Կուտուզյանը ներկայացրեց Հ.Սուքիասյանի «Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման և ապապետականացման խնդիրները և գնահատումը ՀՀ-ում» ուսումնասիրությունը՝ նշելով, որ հեղինակը դիմել է գիտխորհրդին այն տպագրության երաշխավորելու խնդրանքով:

Գիտխորհրդին է դիմել նաև ԳՊՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, ՀՀ սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր Հրանուշ Հակոբյանը իրեն պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու խնդրանքով: Որպես հիմք՝ ներկայացվել են համապատասխան փաստաթղթեր: Կազմվեց հաշվիչ հանձնաժողով / Հ.Ղաջոյան՝ նախագահ, Պ.Մուրադյան՝ անդամ, Ա.Ապրոյան՝ քարտուղար / և անցկացվեց փակ քվեարկություն:

Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Քվեարկությունից հետո Ն.Կուտուզյանը ներկայացրեց վաստակաշատ իրավաբան, արդարադատության և օրինականության ջատագով, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ

Նահապետի Ավետիսյանին «ԳՊՀ պատվավոր բարեկամ» կոչում շնորհելու հարցը: Հարցի շուրջ ելույթ ունեցան ռեկտոր Ռ.Հակոբյանը, Ա.Ապրոյանը:

Նիստի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը:

Որոշեցին՝

1.Հավանություն տալ ԳՊՀ 2011-2016 թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգին:

2.ԳՊՀ-ում ստեղծել պատճենահանման և գրենական պիտույքների վաճառքի կետ:

3.Տպագրության երաշխավորել Հ.Սուքիասյանի «Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման և ապապետականացման խնդիրներն ու գնահատումը ՀՀ-ում» ուսումնասիրությունը:

4.Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ իրավաբանական գիտությունների դոկտոր Հ. Հ. Հակոբյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում և որոշումը ներկայացնել Բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ հաստատման:

5.Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Նահապետի Ավետիսյանին շնորհել «ԳՊՀ պատվավոր բարեկամ » կոչումը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4**

2011թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ, որին մասնակցում էին գիտխորհրդի 27 անդամներ:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ ԲՖ դեկան Վ.Լ.Կատվայան /

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Պ.Ավագյան /

3.«Էլեկտրոնային ուսուցում» ծրագրի շրջանակում ԳՊՀ աշխատանքային խմբի շնորհանդես:

/ զեկ.՝ Մ.Բադայան, Հ.Զարգարյան, Ա.Միրիբյան, Կ.Միրականյան /

4. Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2010-2011 ուստարվա գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Վ.Կատվայանը: Զեկուցողը նշեց, որ կրթական գործընթացը կազմակերպվել է համաձայն ուսումնական պլանների և հաստատված ժամանակացույցի, նախատեսված բոլոր ծրագրերը իրականացվել են, զուգահեռաբար կատարվել են ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական բնույթի զգալի աշխատանքներ: Այնուհետև Վ. Կատվայանն անդրադարձավ ձևեռային քննաշրջանի արդյունքներին՝ դրանք համեմատելով զարնանային քննաշրջանի արդյունքների հետ: Ֆակուլտետի առօրյան հագեցած է եղել գիտական, գեղարվեստական, հոբբեյանական, ճանաչողական, ինտելեկտուալ, բարեգործական միջոցառումներով, մրցույթներով: Բավարար են եղել նաև ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի

գիտահետազոտական աշխատանքների արդյունքները: Ձեկուցողը նշեց նաև աշխատանքներում տեղ գտած թերությունները:

Ձեկուցման ավարտին Վ. Կատվայանը ներկայացրեց բանասիրական ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը, որով նախատեսվում է աշխատանքների ծավալում տարբեր ուղղություններով:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Ավագյանը: Նա մանրամասնորեն ներկայացրեց 2010-2011 ուսումնական տարվա գործունեության արդյունքները՝ անդրադառնալով ուսանողների թվակազմին ու շարժին, ուսման առաջադիմությանն ըստ տոկոսների, ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում, ֆակուլտետում կազմակերպված միջոցառումներին: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը / կից ներկայացվում է զեկուցումը /:

ԳՊՀ գիտխորհրդի նիստը կայացավ տնտեսագիտական ֆակուլտետի 410 լսարանում, որը վերանորոգումից հետո վերածվել էր համակարգչային լսարանի՝ կահավորվելով նորագույն համակարգչային տեխնիկայով: Այն ծառայելու է «Էլեկտրոնային ուսուցում» ծրագրի իրականացմանը: Այդ առիթով տեղի ունեցավ աշխատանքային խմբի շնորհանդեսը, որտեղ ելույթ ունեցան Մ. Բադալյանը, Տեխնիկական շահագործման բաժնի մասնագետներ Հ.Զարգարյանը, Ա. Միրիբյանը, Կ. Միրականյանը:

ԳՊՀ ընթացիկ հարցերին անդրադարձավ Ն. Կուտուզյանը: Նիստի աշխատանքն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանը:

#### Որոշեցին՝

1. ԲՖ դեկան Վ. Կատվայանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:
2. ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:
3. Հաստատել «ԳՊՀ –ում սովորողների ակադեմիական շարժունության կարգը»:

4. Ուժը կորցրած համարել 2009թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1 նիստում հաստատված «ԳՊՀ ուսանողների փոխադրման /լրամշակված/ կարգը»:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

## **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5**

2011թ. նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ, որին մասնակցում էին գիտխորհրդի 26 անդամներ:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ՀՄՖ դեկան Հ.Գ.Ղաջոյան /

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ՏՖ դեկան Ս.Գ.Ամիրխանյան /

3.Բուլղարիայի Հանրապետության Ռուսեի համալսարան գործուղման արդյունքների մասին:

/ զեկ՝ պրոռեկտոր Ա.Հ.Ապրոյան /

1. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանը: Ձեկուցման սկզբում ներկայացրեց 2010-2011 ուսումնական տարվա արդյունքները՝ համապատասխան թվային տվյալներով և փաստերով: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ որակի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման մեխանիզմներին: Ըստ նրա՝ 3 տարվա փորձը ցույց է տվել, որ կրեդիտային համակարգի ամենախոցելի կողմը և թույլ օղակը միջանկյալ քննություններն են:

Ֆակուլտետի կամ ամբիոնի դեմքը որոշվում է դասախոսական անձնակազմի առկայությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջովին պահպանվել է դասախոսական անձնակազմը բոլոր մասնագիտությունների գծով: Այնուամենայնիվ սերընդափոխության խնդիր կա: Ֆակուլտետում կազմակերպվել են բազմաթիվ գիտամշակութային միջոցառումներ, որոնք մասնագիտական աշխարհայացք և գեղագիտական ճաշակ ձևավորելուն են միտված եղել:

Ձեկուցման ավարտին ներկայացվեց ՀՄՖ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՏՖ դեկան Ս. Ամիրխանյանը: Ձեկուցողը նշեց, որ 2010-2011 ուսումնական տարվա աշխատանքներն ուղղված են եղել ֆակուլտետի զարգացման հայեցակարգի դրույթների կենսագործմանը, ինչպես նաև տարվա ընթացքում համալսարանի գիտխորհրդի և ռեկտորատի ընդունած որոշումների և դրանցից բխող միջոցառումների իրականացմանը՝ ուղղված ուսանողների առաջադիմության բարձրացմանը և ուսման որակի բարելավմանն ու ամրապնդմանը: Այնուհետև զեկուցողը մանրամասնորեն ներկայացրեց ֆակուլտետում կատարված աշխատանքները, իրականացված միջոցառումները, ուսման առաջադիմության ցուցանիշները:

Ձեկուցման վերջում Ս.Ամիրխանյանը ներկայացրեց 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

Բուլղարիայի Հանրապետության Ռուսեի համալսարան գործուղման արդյունքների մասին զեկուցեց ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանը: Գործուղումը կատարվել է փորձի փոխանակման նպատակով: Այդ ընթացքում ուշադրություն է դարձվել կրթական, կառավարման բաղադրիչներին ու միջավայրին: Հանդիպում է տեղի ունեցել հայկական համայնքի հետ:

Ընթացիկ հարցերի շարքում ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանը կարևորեց համալսարանի հավատարմագրման գործընթացը: Այնուհետև նա անդրադարձավ Անահիտ Սամվելի Մարգարյանի «Շրջակա միջավայրը և մարդու ժառանգականությունը» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության և ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Արուսյակ Մուխսիխաչյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցերին: Ա. Մուխսիխաչյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. Հ.Ղաջոյան, Ա.Ապրոյան, Թ.Ասոյան: Կայացավ փակ քվեարկություն, որի արդյունքն էր. կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Նիստի ավարտին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Նա առաջարկեց ծանոթանալ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և չափանիշներին, ՀՀ կառավարության բուհերի հավատագրման կարգի մասին որոշմանը, ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդներում քննարկել կրթության որակի բարձրացման կառուցակարգերը:

### Որոշեցին՝

1.ԳՊՀ ՀՄՖ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

2.ԳՊՀ ՏՖ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

3.ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

4,Տպագրության երաշխավորել Ա. Ս. Մարգարյանի «Շրջակա միջավայրը և մարդու ժառանգականությունը» ուսումնամեթոդական ձեռնարկը:

5.Ա.Մուխսիխաչյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և ներկայացնել Բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ հաստատման:

6.Հաստատել «ԳՊՀ-ում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»:

7.Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 2010թ. հունիսի 28-ի նիստում հաստատված «ԳՊՀ-ի մագիստրատուրայի ընդունելության /լրամշակված/ կանոնակարգը»:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ.Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

## ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

2011թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 26 անդամներ:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ . պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան /

2.ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվություն և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ . պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան /

3.ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվություն և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ . պրոռեկտոր Ա.Հ.Ապրոյան /

4.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ու 2011-2012 ուսումնական տարվա հայեցակարգը ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Զեկուցման մեջ մանրամասնորեն ներկայացված էր հաշվետու ժամանակաշրջանում հեռակա ուսուցման ֆակուլտետում կատարված աշխատանքների ծավալն ու ուղղությունները: Ուսանողները ամփոփիչ ատեստավորման քննություններին ցուցաբերել են 83,3 տոկոս առաջադիմություն: Շարունակվել են հարցումները ուսանողների շրջանում, որոնք վերաբերել են գիտելիքների գնահատման չափանիշներին, կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությանը, ռեկտորատի, դեկանատի, վարչատնտեսական անձնակազմի աշխատանքների գնահատմանը: Հարցման արդյունքները վերլուծվել են: Ուսանողական լիարժեք կյանքի ապահովման, գեղագիտական ճաշակի ձևավորման, ազատ ժամանակի նպատակային օգտագործման նպատակով կազմակերպվել են միջոցառումներ, ցերեկույթներ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին, որը ներառում է մի շարք առաջնահերթ ուղղություններ:

Ն.Կուտուզյանը ներկայացրեց նաև ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը: Ըստ զեկուցողի՝ համալսարանում իրականացվել են ընդգրկուն աշխատանքներ. շարունակվել և բարելավվել են կրթական ծրագրերի վերանայումը, ուսանողների շրջանում տարվող կրթադաստիարակչական աշխատանքները, համալսարանի որդեգրած

հակակառույցիոն ռազմավարության իրականացումը: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան գործունեության թույլտվություն է ստացվել «Իրավագիտություն» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների գծով: Շարունակվում է համագործակցությունը մի շարք քոլեջների հետ: Ներկայացվեցին նաև ուսանողների առաջադիմության ցուցանիշները: Աշխատանքներ են տարվում դպրոց-բուհ, ինչպես նաև մի շարք բաժնետիրական ընկերությունների հետ կապերի ընդլայնման ուղղությամբ: Պրոֆեսորադասախոսական կազմը շարունակել է վերապատրաստումների և որակավորման բարձրացման ծրագրերին մասնակցությունը: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ գիտական կոչումների շնորհման և գրքերի ու ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրության հարցերին: Զեկուցման վերջում Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2011-2012 ուսումնական տարվա հայեցակարգը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանը: Զեկուցողը ներկայացրեց 2010-2011 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվությունը և 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

Ընթացիկ հարցերի մասին խոսեց Ն.Կուտուզյանը: Նա նշեց, որ գիտխորհրդի ուշադրությանն է ներկայացնում Վարշամ Ավետյանի «Լորուտի հին ու հնագույն մշակույթը» գրքի տպագրության երաշխավորելու և Անահիտ Մամվելի Մարգարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցերը: Ելույթ ունեցան Հ.Ղաջոյանը, Հ.Հաբությունյանը, Ա.Սիմոնյանը: Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. Հ.Ղաջոյան, Ա.Ապրոյան, Թ.Ասոյան: Քվեարկության արդյունքը՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 0: Այնուհետև Ն.Կուտուզյանը ներկայացրեց միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսի տպագրության և ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում ընդգրկելու հարցը:

Նիստի վերջում անդրադառնալով հաշվետվություններին և գնահատելով կատարված աշխատանքները՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը կարևորեց ինքնավերլուծության գործընթացը համալսարանի հավատարմագրման համար:

Որոշեցին՝

1.ԳՊՀ ՀՈԻՖ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

2.ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվու- թյունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

3.ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվու-թյունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

4.Երաշխավորել սպագրության Վ.Ավետյանի «Լորուտի հին և հնագույն մշակույթը» աշխատությունը:

5.Ա.Ս.Մարգարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և ներկայացնել Բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ հաստատման:

6.Դիմել ԲՈՀ՝ միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսը աստենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում ընդգրկելու խնդրանքով:

7.Բարեգործական և մարդասիրական գործունեության համար <<Orange Armenia>> ՓԲԸ գլխավոր տնօրեն Բրունո Դյուրոնային շնորհել «ԳՊՀ պատվավոր բարերար» կոչում:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան